

Փ Ո Ւ Ն Ը Ս Բ Ո Ւ Ն Մ Ա Ն Հ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ, ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Իրանի Իսլամական
Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,
տնտեսական և առևտրական խոչընդոտների վերացման նպատակով,
ձգտելով զարգացնել համագործակցությունը ստանդարտացման, չափագիտության և
սերտիֆիկացման բնագավառում միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և
նորմերին համապատասխան,
հասկանալով դրանց նշանակությունը մարդու կյանքի և առողջության ապահովման,
շրջակա միջավայրի պահպանության գործում,
ղեկավարվելով երկու Կողմերի տնտեսական շահերով,
երկու երկրներում գործող օրենսդրության շրջանակներում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, սույն Փոխըմբռնման հուշագրին և իրենց երկրների օրենսդրությանը
համապատասխան, պայմանավորվում են իրականացնել համագործակցություն
ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում լրացուցիչ
համաձայնագրերի, արձանագրությունների և ծրագրերի հիման վրա, որոնք նախատեսում են.
ազգային ստանդարտների ներդաշնակեցում միջազգային կամ եվրոպական
ստանդարտներին՝ գիտատեխնիկական համագործակցության զարգացման և առևտրի
բնագավառում խոչընդոտների հաղթահարմանն աջակցելու համար,
փոխադարձաբար մատակարարվող արտադրանքների նորմատիվ փաստաթղթերի
ներդաշնակեցման համատեղ աշխատանքների իրականացում,
չափագիտության ազգային մարմնի կողմից իրականացվող չափման միջոցների
փորձարկումների, տեսակի հաստատման արդյունքների և հավատարմագրված
ստուգաչափում (կալիբրովկա) իրականացնող լաբորատորիաների կողմից կատարված
ստուգաչափման (կալիբրովկայի) արդյունքների փոխադարձ ճանաչման աշխատանքների
կատարում,
ֆիզիկական մեծությունների ազգային և աշխատանքային էտալոնների ստեղծման,
կատարելագործման, բաղադրման և ստանդարտ նմուշների մշակման և արտադրման
համատեղ աշխատանքների իրականացում,
հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների,
ինչպես նաև փոխադարձաբար մատակարարվող արտադրանքների փորձարկման և
սերտիֆիկացման արդյունքների փոխադարձ ճանաչման աշխատանքների կատարում:

Հոդված 2

Կողմերը համաձայնության եկան ստանդարտացման ազգային մարմինների կողմից
հրատարակվող նորմատիվ փաստաթղթերի, տեղեկատվության, պարբերական
հրատարակությունների փոխանակման մասին, այն է՝
ազգային ստանդարտների քարտազրացուցակներ, ազգային ստանդարտներ, նորմեր և
ընթացակարգեր,
ընդհանուր տեղեկատվություն և հրատարակություններ սերտիֆիկացման, փորձարկման
լաբորատորիաների, սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման վերաբերյալ, ինչպես
նաև պարտադիր սերտիֆիկացման ենթակա արտադրանքների ցանկեր,
տեղեկատվություն և նյութեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման
բնագավառում փորձագետների ուսուցման և որակավորման բարելավման ծրագրերի

վերաբերյալ:

Հոդված 3

Կողմերը սահմանում են փոխադարձաբար մատակարարվող արտադրանքների, գործող նորմատիվ փաստաթղթերի և նորմատիվ փաստաթղթերին ապրանքի համապատասխանության սերտիֆիկատների օրինակների ցանկը և տեղեկացնում այդ մասին իրենց իրավասու մարմիններին:

Հոդված 4

Սույն Փոխըմբռնման հուշագրի կատարման ապահովման համար Կողմերը իրենց լիազոր մարմիններ են նշանակում.

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչությանը,

Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության կողմից՝ Իրանի Իսլամական Հանրապետության ստանդարտների և արդյունաբերական հետազոտությունների ինստիտուտին:

Հոդված 5

Սույն Փոխըմբռնման հուշագրի համաձայնեցված դրույթների իրականացման համար 4-րդ հոդվածում նշված մարմինները, անհրաժեշտության դեպքում, կարող են կնքել լրացուցիչ համաձայնագրեր, արձանագրություններ և այլն:

Հոդված 6

Կողմերն ապահովում են սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ստացվող փաստաթղթերի և տեղեկատվության գաղտնիությունը, եթե փոխանցող Կողմը նշում է դրանց գաղտնիության մասին:

Համագործակցության ընթացքում ստացած գիտատեխնիկական տեղեկատվությունը Կողմերից յուրաքանչյուրը կարող է ազատ օգտագործել, եթե մյուս Կողմը չի նշել դրա գաղտնիության մասին: Այդ տեղեկատվությունը կարող է փոխանցվել երրորդ կողմին միայն այն տրամադրող Կողմի համաձայնությամբ:

Հոդված 7

Կողմերը կհամագործակցեն ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման զանազան միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ՝ աջակցելով միմյանց այն միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին անդամագրվելուն կամ մասնակցելուն, որոնց անդամ է Կողմերից մեկը:

Հոդված 8

Կողմերը ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում փորձի փոխանակման, խորհրդատվությունների անցկացման և մասնագետների ուսուցման համար իրականացնելու են մասնագետների պատվիրակությունների փոխայցելություններ:

Փոխայցելությունների պայմանները սահմանվելու են Կողմերի իրավասու մարմինների միջև կնքվող առանձին համաձայնագրերով:

Հոդված 9

Սույն Փոխըմբռնման հուշագրի կիրառման և դրույթների մեկնաբանման հետ կապված որևէ վիճելի հարց կամ տարաձայնություն Կողմերի միջև լուծվելու է փոխադարձ խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 10

Սույն Փոխըմբռնման հուշագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող են

կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով:

Արձանագրությունները կազմում են սույն Փոխըմբռնման հուշագրի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնելու 13-րդ հոդվածում սահմանված կարգով:

Հոդված 11

Սույն Փոխըմբռնման հուշագիրը չի հակասում ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում երրորդ երկրների հետ Կողմերի կնքած այլ Համաձայնագրերին:

Հոդված 12

Սույն Փոխըմբռնման հուշագրի դրույթների կատարման համար ֆինանսավորումը կիրականացվի փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 13

Սույն Փոխըմբռնման հուշագիրը կնքվում է 5 (հինգ) տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի յուրաքանչյուր հաջորդ հնգամյա ժամկետների համար, եթե Կողմերից որևէ մեկը գրավոր չհայտնի իր ցանկությունը վերջինիս գործողությունը դադարեցնելու մասին ոչ ուշ, քան գործողության ժամկետի լրանալուց 6 (վեց) ամիս առաջ:

Սույն Փոխըմբռնման հուշագիրը ուժի մեջ կմտնի այն օրվանից, երբ Կողմերը դիվանագիտական ուղիներով կծանուցեն միմյանց դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Փոխըմբռնման հուշագիրը՝ իր մտադրության մասին դիվանագիտական ուղիներով գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին:

Սույն Փոխըմբռնման հուշագրի գործողությունը դադարում է մյուս Կողմի գրավոր ծանուցումը ստանալուց վեց ամիս հետո:

Կատարված է Թեհրան քաղաքում 2001 թվականի դեկտեմբերի 27-ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, պարսկերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Փոխըմբռնման հուշագրի մեկնաբանման ընթացքում առաջացած տարաձայնությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 22-ից: